ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին

«26» օգոստոսի 2024թ. թիվ 11

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի և 2-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը և «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024թ. օգոստոսի 16-ի թիվ 5 արձանագրության 1-ին կետը՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ	04436817	ք. Վաղարշապատ 1101, Մռավյան փ. 40Ա	«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի	-	-	«26» օգոստոսի 2024թ. թիվ 11 որոշում «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21»

			կազմակերպման» կարգի 42-րդ կետով, մասնավորապես «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող փաստաթղթերի ոչնչացման սարքի բնութագիրը չի համապատասխանել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջին («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին (Հավելված 5) կից ներկայացված փաստաթղթերի ոչնչացման սարքի տեխնիկական բնութագրով սահմանված է՝ «կուտակիչի ծավալը՝ 15-20լ», սակայն «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «կուտակիչի ծավալը՝ 23լ»):			

Սույն որոշման հիմքում առկա («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող) բոլոր փաստաթղթերը հրապարակված են www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում:

3. Պատասխանատու ստորաբաժանմանը՝ ապահովել սույն որոշման տրամադրումը ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ կայացման հաջորդող օրը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ն. ԳԱԼՍՏՅԱՆ**